

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 2021 թվականի դեկտեմբերի 9-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰-ից մինչև ժամը 18⁰⁰-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 14-ին՝ ժամը 14⁰⁰-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի Հ. Ղազարյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ հասցե. ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ:

Տեղեկությունների համար կապ հաստատել 093810648 հեռախոսահամարով կամ գրել dzoragyugh1@schools.am էլեկտրոնային հասցեին: